նում առաջ գնալ: Մըհէն կատաղութեան չափ բարկացած էր. «թո՛ղ էս անպիտանին, — ասում էր նա, — ես չեմ իմանում ի՞նչ բանի պէտք է: Մըհէի հետ վիճել այն քարերի մէջ, յիմարութիւն կը լինէր, պէտք էր նրա գլուխը մի կերպով շոյել: «Դա Կարօյի ձին է, ասում էի ես, նա է ընծայել ինձ, դու խօ Կարօյին սիրո՞ւմ ես»:

Մըհէն Կարօյի վրայ մեծ համարում ունէր, նրա անունը տալու ժամանակ նա մեղմանում էր. այսոամենայնիւ ձին մեզ հետ քարշ տալը վերջապէս բոլորովին անհնարին եղաւ: Մըհէն յայտնեց, եթէ ես հաճութիւն կը տայի, նա կարող էր մի մարդ գտնել եւ ձին նրան յանձնել, որ յետոյ ուրիշ ճանապարհով բերէր եւ հասցնէր մեզ: Եւ աւելացրուց, թէ ինքը շտապում է, շատ է շտապում, ձիան դանդաղ ընթացքով գնալ չէ կարող, որովհետեւ Ասլանի վրայ նամակ ունի, պէտք է շուտով հասցնի, եւ դրա համար ընտրեց դժոարին, բայց կարճ ու կտրուկ ճանապարհը:

Ես տեսայ, որ Մըհէի առաջարկութիւնն ունէր իր առանձին կարեւորութիւնը, բայց որտեղի՞ց մարդ գտնել եւ ո՞ւմ յանձնել ձին: — «Ես կգտնեմ», ասաց նա եւ պատուիրեց ինձ մի փոքր սպասել ձիան մօտ, իսկ ինքը առաջ վազեց եւ մի րոպէում բարձրացաւ սարի գլխին, սկսեց այնտեղից նայել իր շուրջը: Նա արծուի սրատեսութիւն ունէր. շատ հեռուից տեսաւ մի հովիւ, որ արածացնում էր ոչխարներ: Այնուհետեւ նա իր մատները փողի ձեւով գալարելով դրեց բերնին, եւ այնպիսի մի որոտալից ձայն արձակեց, որի արձագանքը կրկնուեցաւ լեռների հեռակայքում: Քանի րոպէից յետոյ նոյն ձայնով պատասխանեցին: Ես առաջին անգամ տեսայ, թէ լեռների մէջ ինչպէս են հեռուից-հեռու խօսում:

Շատ չանցաւ, մեզ մօտ յայտնուեցաւ հովիւը. դա մի քուրդ էր: Մըհէն մի քանի խօսք ասաց նրան քրդերէն, յետոյ ձին յանձնեց:

— Հիմա մենք գնանք, — ասաց ինձ:

— Ու՞ր գնանք, դու ձին տալիս ես աւազակին եւ կարծում ես, թէ նա կդարձնէ՞ մեզ:

Մըհէն իր առանձին եղանակով հանգստացրուց ինձ, ասելով, թէեւ ինքը գիտէ, որ նա աւազակ է, բայց մի բան, որ յանձնում ես աւազակին որպէս աւանդ, նա սրբութեան պէս պահում է եւ կրկին դարձնում է իր տիրոջը: Բացի դրանից, աւելացրուց նա, թէ ինքը տեղեկացաւ, որ այդ հովիւը ո՛ր քրդի հօտերն է արածացնում, եթէ նա անհաւատարիմ կը գտնուի իր պարտաւորութեան մէջ, ինքը Մըհէն կարող է մի ձիու փոխարէն յափշտակել նրա աղայի ամբողջ երամակը: